01.07.24 - 06.07.24
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ

Ս.թ. հուլիսի 1-6-ը՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում կանցկացվի «Մաթեմատիկական անալիզ, դիֆերենցիալ հավասարումներ և կիրառություններ» խորագրով միջազգային գիտաժողով:

Գիտաժողովի ընթացքում կքննարկվեն մաթեմատիկայի կարևոր խնդիրները, կառաջադրվեն նոր գաղափարներ ու մեթոդներ և կմատնանշվեն դրանց կիրառման բնագավառները:

Գիտաժողովին ներկա կլինեն ԵՊՀ ռեկտորը, Մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանը, ֆիզիկայի ինստիտուտի տնօրենը, Գենտի (Բելգիա) համալսարանի մաթեմատիկայի բաժանմունքի գիտական ղեկավար, գիտաժողովի համանախագահ Մայքլ Ռուժանսկին, գիտաժողովի համաղեկավար, ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի բարձրագուն մաթեմատիկայի ամբիոն վարիչ Մարտին Գրիգորյանը և արտերկրի մի շարք հեղինակավոր մաթեմատիկոսներ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am